

ՔԱՎԱՆՈՒՄ ԱԳՐՈՒԹՅՈՒՆ	
Պուշկարիոյ համար	12 մր.
Տարեկան	6 »
Վեցամսեայ	8 »
Արևմտահայկանի համար	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար	
Տարեկան	3 մր.
Վեցամսեայ	1.50 »
ՎԱՆՏԻՒՆՆԵՐ	
Իտալացիական տարածք	40 սանթիմ
Պոլսի վերջին տարածք	20 սանթիմ
Ամերիկայի վերջին տարածք	20 Օլյ գեղջ կրկնայ
Վառնայի համար	10 սանթիմ

ՇԱՌՓՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԵՎ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐԵՔՇԱՔԻՆ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկեյ
Էմբուգրոսիանս հասցիկի
—
Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)
—
Tranparatuf is zhe srnate
Արևմտահայկանի ձեռքի
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար ձեռքի
(15 ՍԱՆԹԻՄ)

Ստիպողաբար կը խընդրենք մեր բաժանորդներէն, որպէս զի բարեհաճին իրենց ներկայ տարուան բաժնեգրիները խմբագրութեանս ուղարկել:

Այս առթիւ կը յիշեցնենք նաեւ անոնց որոնց մասնաւոր նամակներ զրկած էինք նախորդ շրջանին բաժնեգրիները պահանջելով, թէ այլ եւս առանց ու ե նկատողութեան պիտի հրատարակենք իրենց անունները եւ հասցէները իբրեւ անբարեխիղճ խաբեբաներու:

ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄ

Օր նոր, որոշում նոր, ահա Համիտի կառավարելու կերպը:

Այսօրուան թուրքիոյ լուրերու բաժնին մէջ ընթերցողը պիտի կարդայ թէ՛ գատական գործերու նախարարութիւնը յայտարարեք է օտարահպատակ փաստաբաններուն որ՝ այսուհետեւ իրաւունք չի պիտի ունենան գատակարել թրքական դատարաններուն առջեւ, մինչեւ որ չունենան ձեռքերն իր կայսերական վարժարանէն վկայագիր մը: Այս լուրը մեծ յուզում յառաջ բերած է օտարահպատակներուն մէջ՝ որոնք գիտած են իրենց գեոսպաններուն:

Այս հրամանը բղխած է վերէն, Համիտի որջէն, վասն զի՝ հիմա նամանաւանդ ոչ մէկ տերեւ կը շարժի, ամբողջ թուրքիոյ մէջ առանց անոր հրամանին: Երկրին բոլոր գործերուն զեկը ինք առած է ձեռքը:

Այս որոշումն ալ, յատ բնական է, տուած է Համիտ կամ իր սրտնեղութեան մէկ վայրկեանին, կա՛մ թեւադրուած է ուղղակի իր խրատելիակ լրտես պալատականներէն, որոնց գլխաւոր մտածումն է ամէն օր խրաչեցուցիչ նորութիւններ երեսան հանել իրենց կործար Օսմանիյէ ազամանդակու պատուանշանով մը զարդարելու կամ իրենց նիհար ու վտիտ քուակները պարարտա-

ցնելու «գովելի» նպատակով: Համիտի խելքը գլուխը եկեր է, տուած է անիկա իր վերջնական որոշումը. «այսուհետեւ թուրքիան՝ միայն թուրքերուն՝ Օտարները իրաւունք չունին գալ հաստատուիլ իր սեպհական երկրին մէջ եւ իր գործերուն միջամտել, ինք միթէ տէրը չէ՛ իր երկրին:

Սակայն այսօր այդ հիւանդ մարդը կը նմանի կալուածատէր պարտապանին, որ չէ խորհած ժամանակին իր պարտքերը վճարելու մասին միջոցներ ձեռք առնել: Պայմանաժամը լրացած ըլլալով՝ պարտապահանջները կը մտնեն կալուածէն ներս ու կը տիրեն անոր, ինչքան մարդը կըմբոստանայ, կընդվզի, կը բողբոջէ անոնց վարժուներին համար, բայց լսող չի կայ իրեն:

Օտար թղթատուները գոցել տալու փորձին մէջ անյաջողութեան մատնուեցաւ, որովհետեւ եւրոպական տէրութեանց մէջ կատարեալ համաձայնութիւն կը տիրէր, միայն իր բարեկամ Գալէթիին գեոսպանը առջի բերան ձեռնպահութիւն ունեցաւ, բայց ան ալ վերջ ի վերջոյ տեղի տուաւ միւսներուն համբաւի գործակցութեան առջեւ: Քսաներորդ դարուն նշանաբանն է կարծես ո՛ւր շահ, հո՛ն միտ թիւն:

Համիտ, իր հակամարդկային գործերը անձայն անշուք զուլի հանելու համար, գիտէ առիթէն օգտուիլ, տէրութեանց անհամբաւ յայտնութեան կը նպաստաւորուի: այս մասին ունի սուր հոտառութիւն եւ արդոսի աչքեր:

Առ այժմ տէրութիւնները զբաղած են չինական խնդրով, Համիտ յարմար առիթ համարեց մէջտեղէն վերցնելու օտար նամակատուներու գործը, բայց էր ջանքերը ապարդիւն մնացին: Հիմա ալ, ո՞վ գիտէ, ինչ սեւ սեւ խորհուրդներով պաշարուած՝ որոշեք է օտարահպատակ փաստաբաններուն արգիլել ազատութիւն գատակարելու, եթէ յաջողի, լաւ: հակառակ պարագային ազուտական խորամանկութեամբ գիտէ անիկա Պիլատոս-

սի նման ձեռքերը լուալ եւ ըսել տէրութեանց ներկայացուցիչներուն առանց խայնելու: «նեքողամիտ կըլլաք, լուր չունէի, անհագ եղիք, ձեր փափաքին համաձայն ընդհուպ պիտի կարգադրուի այդ գործը»:

Կարմիր մարդը այսօր ճիշդ խեղճատակի պարզ գերը կը կատարէ միւս տէրութեանց վեհապետներուն առջեւ:

Ուրիշ երկիրներու մէջ նորաոր որոշումներ կը տրուին եւ վայրկեանապէս ալ կը գործադրուին, երկրին նտեսական բարգաւաճումին եւ ժողովրդին յառաջադիմութեան համար, իսկ թուրքիոյ մէջ որոշումներ կը տրուին երկրին նտեսական քայքայումին եւ ժողովրդին փճացման համար:

Երջանիկ թուրքիա (• •):

ՎԱՌՕԴ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՕՐԷՆՍ, 18 Մայիս

Հօրէնսի մէջ Հ. Յ. Գաշնակցութեան տասնամեակին առիթիւ փայլուն հանդէս մը տեղի ունեցաւ: Ամէնքն ալ կը սպասէինք արդէն այդ հանդէսին որ կանխաւ ազդարարուած էր սպուած յայտագրերով: Ոչ միայն Հօրէնսիք, այլ շրջակայ քաղաքներէն, Լիւնէն, Լոզելէն, Նաչուայէն ահագին բազմութիւն մը լեցուած էր հանդիսավայրը, որ զարդարուած էր նահատակներու պատկերներով եւ կանանչազարդ կամարով մը վրան կարմիր ու մեծ գրերով «Հայ. Յեղ. Գաշնակցութեան տասնամեակ» բառերը գրուած, մէջտեղն ալ Մայր Հայաստանի պատկերը, իր երկու կողմը ունենալով հայկական եւ ամերիկեան գրօշակները:

Հանդէսին համար Պոսթընէն հրաւիրուած էին Օր. Մ. Պասմաճեան եւ Թ. Քիւրքճեան, Ա. Վառնեան եւ Ա. Լեւոնեան, եւ Սէնթրալֆօրսէն Օր. Սրբուհի Ռուբէնեան եւ տեղէն Օր. Մ. Պօլաճեան: Հանդէսը ժամը 6 1/2 ին սկսաւ եւ 10 ին վերջացաւ: «Բամբ

որոտանէն» ետքը աստիճանապարտն Յ. Պ. Բանի մը խօսքով հանդէսին նպատակ բացատրեց, Գ. Պօլաճեան Գաշնակցութեան տասնամեայ գործունէութեան համառօտ պատմութիւնը ըրաւ, Օր. Քիւրքճեան «Յառաջ հայեր» երգեց, գաշնակահար Օր. Պասմաճեանի ընկերակցութեամբ: Յետոյ Պ. Մ. Մ. «Իրօշակէն» Բարկէն վարդապետի տեղեկագրին մէկ մասը կարդաց: Պ. Գրիգորի «Իզ Կանդիսի» երգէն ետքը, Օր. Մ. Պօլաճեան գեղեցիկ աստիճանութիւն մը ըրաւ, ի միջի այլոց իգական սեւը հրաւիրելով, որպէսզի ինք ալ բաժին ունենայ ազգային ազատագրութեան գործին մէջ եւ մղում տայ անոր, Պ. Ղ. Մ. կարդաց «Իրօշակէն» «գէպի երկիր» խմբագրականը, ուրկէ ետքը բեմ բարձրացաւ փոքրիկ օրիորդ մը Սրբուհի Ռուբէնեան եւ արտասանեց «Ժայռ եւ ալիք» բանաստեղծութիւնը: Օր. Թ. Քիւրքճեանի երգէն յետոյ, Պ. Լեւոնեան հրաւիրուեցաւ խօսելու, նիւթ ունենալով «Հայուն Ապաւէն»ը ազգու կերպով շեշտեց Գաշնակցութեան գերը եւ կատարած գործերը, զայն ներկայացուց իբրեւ իսկական յեղափոխական կազմակերպութիւն եւ հրաւիրեց աշակցիլ անոր որ միակ հայութեան ապաւէնն էր: Հանգանակութիւն մը կատարուեցաւ իսկոյն, որուն հասոյթը եւ շուրջ 320 տոլար: Այս արդիւնքը ինքնին ամենէն պերճախօս ապացոյցն է համոզուելու համար թէ ժողովուրդը գիտէ քաջալերել լաւ ու օգտակարը: Պ. Վառնեան կարճ աստիճանութիւն մը ըրաւ, ուրկէ ետքը կրկին արտասանութիւններ եղան եւ հանդէսը փակուեցաւ «Քանի թըմրինք» երգով ու ժողովուրդը մեկնեցաւ գոհ ու խանդավառութեամբ զեղուն:

ԻՊՏԵԱԼ

Յ. Գ. — Կիմանանք թէ՛ նիւեօրքի մէջ ալ հանգանակութիւն կատարուած է, որուն արդիւնքը եղած է 115 տոլար:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ

Անցեալ ուրբաթ գիշեր, ինչպէս ծանուցուած էր, տեղի ունեցաւ թատերասեր երիտասարդներու խմբին կողմէ ազգային վարժարաններու ի նպաստ արուած ներկայացումը:

Ներկայացումը ժամը 10ին սկսաւ, ցանցառ բազմութեան մը ներկայութեամբ: Կերակատարները արհեստով գերասաններ չըլլալով հանդերձ ինչպէս կերելու ամէն ջանք թափած էին իրենց ստանձնած դերերը ճշգրիտ եւ խելով թեամբ ներկայացնելու, ու բաւական յաջողութիւն ցոյց տուին: Ֆալսեթոյ յաջողեցաւ ճարպիկորէն կատարել իր միաժամանակեայ ոճի շարժումը: Թէեւ քիչ մը անբնական արագութեամբ, կոյրը իր արտայայտութեամբ, խարխափուն եւ յուսաբեկ շարժումներով, պահ մը լարեց մեր ամենուն ուշադրութիւնը եւ կարողացաւ իր ցաւերով կսկծեցնել հանդիսականները: Օր. Մ. Փալսեթան Գոնիէլի ղերին մէջ ցցուց սկսնակէ մը պահանջուած յաջողութիւնը:

Ներկայացումէն ետքը Տէր եւ Տիկ. Յակոբեան եւ մէկ քանի երիտասարդներ կատակերգութիւն մը ներկայացուցին:

Ցանկալի է որ այդ երիտասարդները, որոնք ինչպէս այս անգամ ալ ցոյց տուին, զուրկ չեն դերասանական ընդունակութենէ, իսկապէս իրենց սիրած գործին փարէին, աւելի յարմար թատերաստներ ներկայացնելու միջոցներ գտնելին եւ աւելի պատեհ սեղոնի մը մէջ քանի ներկայացումներ սարգէին, ասով թէ ազգային ո եւ է հաստատութեան մը նիւթական օժանդակութիւն մատուցած պիտի ըլլան. եւ թէ, ինչ որ աւելի կարեւոր է, հասարակութեան ընթացումներուն ու սովորութեանց վրայ ապահովապէս մեծազոյն ազդեցութիւնը պիտի ունենան, եթէ միայն աշխատին պատշաճեցնել մեր բարձրունք իրենց ներկայացնելիք խաղերը: Այդ յոյսը արդեօք պէ՞տք է սնուցանել զէ՞ր յառաջիկայ փորձն եղանակին համար:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի. ՎԱԶՈՎ

ՈՉ ԿՐԻՆ ԶԱՆ ՈՉ ԿՐ ՍՈՒՆ

II

(Շար. Ասիտոյ քիւնի)

— Եթէ անոր հաստ փորը չը պատուեմ ուսած տիկի նման, թող ինձի Սթանչո Տէրէպէլի չըսեն, պոռաց հսկայ երիտասարդ մը, արագ ու մոլեգնաբար ծամելով:

— Անիծեալ անօրէնը, կոտորած սանթրի չիտար... ձգեց մեզ որ սովէ մեռնինք... պիտի ծակոտեմ, եթէ ձեռքս իյնայ, կը պոռար, սեւ մորուքով ուրիշ պարոն մը, պատառաքալը սպառնաձեւ բռնելով:

— Կը լսէք այդ չորպածիները, աղքատներու քրտինքովը կապրին... Ես կըսեմ որ, թուրքերը կոտորելէ առաջ, ատ շուները մորթելու է, ուրիշ ճար չիկայ, կը գոչէր երրորդ

Թատերասեր երիտասարդները իրենց անջնե լայն ժամանակ ունին եւ եթէ անգամ մը գործի ձեռնարկեն, իրենց ամէն կերպ աշակցողներ պիտի գտնեն ապահովապէս:

ՃՕՆ ՍՕՐԼԵՅԻ ԶԱՌԸ

Ճօն Սօրլէյ անցեալ երեքշաբթի Սկովտիոյ մէջ ճառ մը խօսեց է. ուր սաստիկօրէն քննադատեց է արդի անգլիական նախարարութեան ընթացքը եւ պարզեց է հարաւային ափրիկեան պատերազմը իր ծագումով ու արդիւնքներով: Իրեն նայելով կարելի էր այդ պատերազմէն խուսափել:

«Չեղիւնակութեան տէր մէկ քանի անձեր ձեզի ուղեցին հաստատել թէ, ըսեք է Սօրլէյ, մենք այդպէս կարծիքով կատարեալ երազողներ ենք: Մենք կուզէինք հարաւային ափրիկէի խնդիրը համբերութեամբ եւ ժամանակի տեսողութեամբ լուծել, ասոնք կերեւայ թէ ուղեցին անհամբերութեամբ եւ յաւիտենականութեամբ լուծել, իրենց գործածած ամբարտաւան լեզուէն ետքը՝ մենք կենթադրելիք որ կայսրութեան համար ճգնաժամի մը բոլորէ չի պիտի ունենանք, այլ ընդհակառակը արդէն անվիճելի եւ փայլուն յաջողութեանց վաղորդայնը հասած ենք»:

Ճօն Սօրլէյ ապացուցեց է նաեւ, թէ զինուորական ծախքերու աճումը գլխաւորապէս վարձկան դասակարգին վրայ կը ծանրանայ, դատապարտեց է Անգլիոյ յարձակողական ձգտումները, որոնք իրմէ կը խլեն միւս կառավարութեանց եւ ժողովուրդներուն համակրութիւնը:

Իսկ անոնց համար որոնք կը պահանջեն պօստներէն անպայման անձնատուր ըլլալ, Ճօն Սօրլէյ, զայնս որակեր է անւարձոր պիզնարի մակդիրով:

Ճօն Սօրլէյի ճառը մեծ ներգործութիւն ունեցեց է ներկաներու վրայ, որոնց մէջ կը գտնուին եղբոր նաեւ երեսփոխաններ:

ԵՆԻՐՈՎԱԿԱՆ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ

Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

Ընկերներ,

Ներկայ տարւոյ համագումարի մանրամասնութիւններին երեւի դուք արգէն ծանօթ էք՝ ձեր պատգամաւորները կամ ընկերակիցներ ժիջոցով, Համագումարի յաջողութիւնը մի կողմից, և առաջիկայ տարւոյ համար նրա հաստատ «գործունէութեան ծրագրի» կարեւորութիւնը միւս կողմից՝ մեզ իրաւունք են տալիս դարձեալ մի գիմում աննլու եւրոպայի ամբողջ Հայ ուսանողութեան, թէ՛ նրանց որոնք արգէն անդամադրել են «Միութեան» և թէ՛ մանաւանդ նրանց որոնք, դեռ պուրս են մնացել, հրաւիրելով բոլորին՝ աւելի մեծ եռանդով աջակցել գործունէութեան ծրագրի իրագործման:

Լիազոր կօմիտէն որի առաջին նիստը կայացաւ 20/27ին ժընէվում, շուտով ձեռք կը տեղեկացնի այդ ծրագրի գլխաւոր կէտերը: Առ այժմ կարգադրւի յանձնաժողովը, — որի նոր ընտրութիւնը կայացաւ ապրիլ 30ին, — «Միութեան» նիւթական միջոցները աւելի ուժեղացնելու և մեր կապերը աւելի ամրապնդելու համար, խնդրում է ձեզ՝

Ա. Անգամագրել տեղական բուսանողական շրջաններում յոգուած մեզ անդամավճարները (չստերը այդ դեռ չեն արել):

Բ. Հանգանակութիւն սկսել ուսանողական շրջաններում յոգուած «Միութեան» (բացի Միւնիխէնից ժընէվից և Լօզանից, ուրիշ քա-

— Տիմիթրէ, լո՛ւ՛, Մրավքան իրաւունք ունի... չորպածիները դաւաճաններ ու վախառուներ են:

— Ամէնքն ալ մորթենք, պատասխանեցին ուրիշները:

— Անկցին չորպածիները, կեցցէ ազգը:

— Ապրին թշուառները:

— Ապրի Գօմուհան (համայնք) աղաղակեց Սքիրո Մաքէտօնքին, բողոքեցով սեղանին գտնելով ուժգին: Ատ ժամանակները Գօմուհան նոր բան մըն էր, ատոր համար ալ մօտա էր Այսու հանդերձ ատան գիւնիով դաւաթները յարատեւ շարժման մէջ էին, գոտ ու գոչը, աղմուկը կաւելնար: Երկու հոգի, որ յօրպածիներու պաշտպանի քովը կեցած էին, յաջողած էին խօսքեր փոխանակել յետոյ, իրարու մազերէն բռնել ու զիբար խեղդել: Դաւաճան, լրտես, աղաղակները միայն կը լուռէին կոտին մէջ: Մաքատեղու գին, հասարակութեան մնացած մասն ալ վարակեց:

Մաս մը Տիմիթրօի կողմը բռնեցին որ խեղդուածի նման կոտնար, ուրիշները, մեծամասնութիւնը իրեն զէմ իրենց զգոհութիւնը յայտնե-

լաքներում այդ դեռ չէ ձեռնարկուած):

Գ. Ընտրել աշխատակից անդամներ և ուղարկել մեզ մասնաճիւղի հասցէները, ինչպէս անդամների ցուցակը:

Կարգադր Յանձնաժողով Հասցէ՝ Union des étudiants Arméniens de L'Europe Genève (Suisse)

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

Թատերական մասնախումբս խորին շնորհակալութիւնը յայտնէ «Վարիէթէ» դերասանական խմբին Տնօրէն Տիար Թոնային որ հաճեցաւ թոյլատրել իր ընկերներէն մի քանի մասնակցելու անձնուիրաբար ինչպէս Ս. Ղ. վարժարանաց տրուած ներկայացման:

Թատերասեր Մասնախումբ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Յայտնի է թէ Գերմանացի կուլտիւրի անուխի կայան մը հաստատել կարմիր ծովուն մէջ և իրենց գիտաօրութիւնն էր Թուրքիայէն առնել Պարզանի աշխարհագրութեան կառավարութիւնը չէ յանձն առեր այս շնորհով թիւնը, բայց թոյլ տուած է Գումա կղզիին մէջ հաստատուելու Գերմանացիք իսկոյն շինութիւններ սկսեցին հոն թուրք պաշտօնեաներու հսկողութեան տակ:

— Սուլթանը Պէրլին քաղաքին նուէր ըրեր է հիւանդներու տաղաւար մը, որուն յատակադրիժը Սուլթանին ճարտարապետ

ցին: Ամէնքն ալ խոնուեցան:

— Դո՛ւրս, դո՛ւրս. կը պոռային շատ մը ձայներ:

— Դուրս չորպածիներու բարեկամը կրկնեցին ուրիշները, եւ մի քանի շղարկեց ձեռքեր շուարած Տիմիթրօս բռնելով վերուցին սանդուխտ վրան գնելու, այսինքն դռնէն դուրս ընելու:

— Կը զարնէ՛մ, ձգեցք ինձի, ձգեց Տիմիթրօս, իր բեկովէրը քաշելով:

Այս խառնաշփոթութիւնը թերեւ աւելի տխուր հետեւանքներ ունենար, եթէ Սթրանճան չը միջամտեր:

— Կեցէ՛ք, թողէք Տիմիթրօս, պոռաց նա, գաղտնացած հայրուկները մէկդի հրելով:

— Ատ մեհերէ (՛) է, ըսաւ Մրավքան:

— Չէ, պատասխանեց Սթրանճան:

— Չէ, հապա ի՞նչ է:

— Ձեզի պէս ազգային կոտի մէջ

(՛) Անպիտակ ու անգործնական անառն մարդ որ չաղքաբոլորութեամբ ուրիշի քրտինքով կապրի:

մը, որ «Սօվոպոտայ» թուրք ընթերցողներէն էր:

— Սըվոր նայէ, ընդհատեց զանի ուրիշ մը, աշխատէ՛ պարոն քիչ մը քրտնէ, եւ ան ատեն ուրիշներուն դէմ պոռա՛... կարծես թէ չորպածիները միայն ատոր համար կաշխատին որ, Բէթքօ Մրավքային ծոցը թափեն, Բէթքօ Մրավքա զարմացմամբ դարձար զէպի այն անձը, որ կը յանդգնէր ատ բառերը երեսին շարժել:

Յետոյ զայրոյթով մը ըսաւ:

— Ես պարզապէս չեմ մէջ գործածում, ազգին ծառայած եմ արիւն ալ թափած եմ, բայց քեզ տեսնա՛ք... դու ան ատենները քովըրիք (՛) կը ծախէիր...:

Առաջինը կատողացաւ եւ դաւաթի մինչեւ յատակը քամելով ըսաւ:

— Գու՛րբիք ծախել, ատ միայն ես գիտեմ, քու գիտնալիք բանը չէ, Բայց եթէ կուզես ոտքիս վէրքերը ցուցնեմ... Միայն դու չես կուտի գնացողը, բայց ուրիշները քեզի պէս չեն մռնչէր:

Գանի մը ձայներ պոռացին:

(՛) Բաջուք, չէօրէկ:

Յանքո պէյ պատրաստած է, Միւլիկ և Բամպուրոյու բժշկական անվան շահագուծեամբ և Կիյեօմ Բ.ի գրկած է:

Փրանսական դեսպանը տասնհինգ կառավարութեան 500,000 ֆրանք ստացեր է, իբրև փոխարինութիւն հայկական կոտորածներու ատեն ֆրանսական հպատակներու կրթած ֆրանսին:

Սիրանօ տը պէրժըրա թատերգութեան ներկայացումը արգիլուեր է Վուրք կառավարութեանէն այն առարկութեամբ թէ, յիշեալ խաղը յեղափոխական նկարագիր մը ունի:

Բ. Դուռը իմացուցած է Խալիօյ դեսպանին թէ՛ Բրէվէյայի միջազգային համար Խալիօյ կառավարութեան գոհացում պիտի տրուի: Յանցաւոր սպան պիտի պատժուի, տեղական իշխանութիւնները Խալիօյ հիւպատոսէն ներողութիւն պիտի խնդրեն և հաստուցում մը պիտի ըլլուի:

Դատական գործոց նախարարին հրամանով, ոչ մէկ օտարահպատակ փաստաբան պիտի չի կրնայ տաճկական դատարաններու առջեւ դատավարել, եթէ թուրք իրաւագիտական վարժարանէն վկայական չունի: Այս որոշումը մեծ յուզում յառաջ բերած է Պոլսոյ փաստաբաններուն մէջ, որոնք որոշեր են դեսպաններուն դիմում ընել:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Իրամական զեղծութի ամբաստանութեան տակ գտնուող նախկին նախարարութիւնը դատի ենթարկելու խնդիրը Սօպրանիէն որոշեր է աշնան յետաձգել և խնդիրը քննելու համար յանձնարարած է:

տեսած եմ զինքը... քաջ է իրաւունք չունիք...

Սթրանճա, մանչեց հաճին, ըսել է ան իրաւունք ունի, մենք ենք յանցաւորը... մենք, կը հասկնաս, զատուոր չենք ուզեր:

Դուք ալ իրաւունք ունիք, որովհետեւ թշուառ ու անարգած տառապեալներ էք, ինչպէս որ ես ալ... եւ իրաւունք ունիք գանդատելու:

Այս խօսքերը վաղանցուկ բարկութեամբ լեցուած հիւրերը գոհացուցին:

Կեցցէ Սթրանճան, մեր քաջ դրօշակագետը, գոչեց Մաքէս օնսքին զաւաթը վերցնելով:

Կեցցէ՛ — ամէնքն ալ գոռացին — զարնէ՛ք: Եւ գինոյ զաւաթները իրարու զարկին: Սթրանճան, գեւորուելով իր գողտղուն ձեռքով վերցուց և յուզեալ ձայնով մը ըսաւ:

Ձեր ըրած պատուին, շնորհակալ եմ սիրելի եղբայրներս: Ձեր մէջը՝ այսինքն իմ եղբայրներու մէջը գտնուելը, ինձի՛ ձեր հայրուկի մը ամենամեծ հրճուանքն է: Մեր փառաւոր կռիւնները Պուլկարիոյ մէջ ազգը կը յիշէ... Ատոնք զարթնցու-

նախուճը մը ընարել: Ասիկա ընկրկում մը կը նկատուի:

Կ Ր Է Տ Է

Իրեաէ գտնուող բոլոր հիւպատոսները իրենց կառավարութիւններէն հրահանգ ստացած են շքնդուել Յուսաստանի հետ միանալու մասին կրէտական խորհրդարանին որոշումը յայտնող գրութիւնը:

Պ Ե Լ Ճ Ի Գ Ա

Սոսկալի հրդեհ մը ծագեր է Անվերսի արքայական մթերանոցին մէջ, կրակը սկսեր է ժամը 3ին հինգերորդ յարկէն, ուր կը գտնուին եղբր մեծ քանակութեամբ ծխախոտ, շաքար ու կերպասներ: Զարմանալի արագութեամբ հրդեհը տարածուեր է և ոչինչ չէ կրցեր առաջն առնել: Ստորին յարկերուն մէջ ալքուի ահագին մթերք ամբարուած է եղեր: 200 մէթր հեռաւորութեամբ հրդեհին տաքութիւնը անտանելի կըլլար և շրհանկիրները չէին կրնար մօտենալ: Թէեւ շէնքին մեծագոյն մասը երկաթ և աղիւս էր, բայց ամբողջ ժամ մը անընդհատ այրեցաւ: Կէս գիշերին հրդեհը արդէն մեղմանալ սկսած էր և ծաւալելու վախ չէր մնացած, բայց ապրանքները դեռ կայրէին և հրդեհը 2—3 օր կը կարծուի թէ պիտի տեսէ:

Հրդեհին ծագման պատճառները որոշապէս չի գիտցուիր: կը կարծուի թէ քանի մը խոնաւ պարկերու ինքնաբերարբարուելումին արդիւնքն է:

Ամբողջ ֆեսաը 16 միլիոն ֆրկը հաշուուի, 3 միլիոն շէնքին

ցին ազգը, եւ անոր սիրտին մէջ ազատութեան ու արդարութեան փափաքը լեցուցին: Բայց պիտի ըսէք, ո՞վ է մեզ պատուողը այսօր: Ո՞վ է մեզ ճանչցողը, Հանգարտեցէք, մենք մարդ ենք, մենք պուլկար ենք և մենք հայրենիքին ունեցած մեր սրբազան պարսկականութիւնը կատարեցինք: Ուրիշ ոչինչ: Ուրիշ ի՞նչ պէտք է մեզի: Դրա՞մ: Չենք ուզեր, որովհետեւ զրամի համար արիւն չենք թափած, որովհետեւ ան բոման հարուստներու բոլոր գրամներէն աւելի թանկ է: Տուն տեղ կուզենք: Մենք մեր յօժար կամքով մեր առեւը ու կայքը լքեցինք: Մենք կայուածի պէտք չունինք: Մենք Պուլկարիոյ ազատութեան համար զոհուած ենք, եթէ վարձատրութիւն մը գտնանք, ապի Պուլկարիոյ ազատութիւնը պիտի ըլլայ, ոչ աւելի ոչ պակաս: Ընթացիտ, զժուար է ձեզ համար սոված պատիւը, եւ օտար երկիր ոչ խղճալի և ոչ ալ պաշտելի թափափուր, ինձի ալ գժուար է, սոս ձերացած ոսկորներովս ու ախտացած կուրծքովս, աւլեմ, շտկեմ, տնային գործերով պարագիծ, ինձի՛ որ ատեն մը առեւծի դրօշը կրած եմ, ես, քաջ Սթրան-

և 13 միլիոն ապրանքներուն համար:

Չ Ր Ն Ա Ս Տ Ա Ն

Մեծ հրդեհ մը ծագեր է Փէքինի արգիլեալ մասին մէջ: Ծառոնցիք և Ամերիկացիք խիստ շղթայ մը հաստատուեր են քաղաքին այս մասին շուրջը, այդ պատճառաւ մանրամասնութիւններ կը պակսին:

Հրդեհին պատճառը կը կարծուի թէ նոյն օրուան փոթորկին ատեն իջած կայծակներէն մին եղած է: Հակառակ անձրեւին հրդեհը ծաւալուեր է և բազմաթիւ շէնքեր այրեր: Կայսեր մասնաւոր սենեակները և նախնաց տաճարները անփութ մնացեր են: Ծանր ֆրանսեր չեն պատահած:

Անգլիացի և ֆրանսացի զինուորներուն դէպքը զորանցեալ թուով ծանուցինք, սկիզբ առեր է գինետան մը մէջ, կըռւին ատեն երկու կողմէ զինուորներ իրենց զէնքերը գործածեր են: Երկու ֆրանսացի սպանուուեր է, 4 ֆրանսացի, 3 գերմանացի և 4 անգլիացի վիրաւորուեր են: Դէպքը քաղաքական ոչ մէկ հանգամանք չունի:

Քօնիժ տը վալտէրգէ ներկայ գտնուեր է թիէնձինի միջազգային զոհ գացող երկու ֆրանսացի զինուորներու յուղարկուելու թեան հանդէսին: Խիստ միջոցներ ձեռք առնուեր են տարբեր ազգութեանց զօրքերուն մէջ այդ կարգի ընդհարումներու առջեւ առնելու համար:

Այս միջազգային քաղաքական ուժ հետեւանք պիտի չունենայ, բայց ֆրանսական թերթերը ցաւ կը յայտնեն որ Անգլիացիք այնքան չուտ կրակ ընելու որո-

ճան, որուն ձեռքը հիմա, դգալ կը բռնէ, ծխած մամիկներ զարձանք... Ահ, սիրելի եղբայրներ՛, Բոլորն ալ ոտքի վրայ ելան:

Սթրանճան նորէն զաւաթը վերցնելով շարունակեց:

Եղբայրներ, բնաւ պէտք չէ արտմինք, եթէ մենք հոս թափառաշրջիկ ու մերկ ենք: Պուլկարիոյ մէջ մեր թշուառ եղբայրները հազարապատիկ գէշ են: Հոն թուրքերը սուգանք կառնեն, կը թալանեն, կը սպաննեն, կը բռնարարեն, եւ ժողովուրդը գերութեան տակ կը հեծէ ընելիք մը չունենալով: Մենք գոնէ ազատ ենք: Քանի որ ազատութիւն ունինք, ամէն բան կրնանք ընել, պէտք չէ յուսահատիլ: Քանի որ ոտքեր ու ձեռքեր ունինք մեր երակները արիւն: Եւ մեր սիրտերու մէջ կրակ կայ, մեր հայրենիքը միշտ մեզի պէտք ունի: Եթէ այսօր չէ վազը գարձեալ ժամը պիտի հնչէ:

Պէտք է միշտ պատրաստ ըլլանք — ես ձեր ոսկորներովս զարձեալ դրօշակը ձեռքս պիտի առնեմ, գոնէ անգամ մըն ալ Պալքանի վրայ ծածանեցնեմ զանի, եւ ան ատեն մենքիմ, Դեռ շատ երկար ժամանակ

չու՛մ տուեր են, երբ կարելի էր առանց անոր ալ խնդիրը վերջացնել, և կաւելցնեն թէ անգլիական զօրքերը շատ խոհեմու՛մութեամբ ու զգուշութեամբ չեն շարժիր, բունի որ այնքան քիչ ժամանակի մէջ վէճեր ունեցած թէ՛ ուսական թէ՛ գերմանական և թէ՛ ֆրանսական զօրքերուն հետ: Հակառակ ասոր Քօնիժ տը վալտէրգէ մեկնելէն առաջ յայտարարեր է թէ Փէքին քաղաքը հինգ տարի միջազգային զօրքերու պահպանութեան տակ մնալու է:

Լիհունկ-Չանկ, խնդրեր է Մա զօրավարէն իսկոյն կեդրոնական Չիլի երթալ իր 10,000 մարդիկներով՝ ուրկէ պարպուած են միջազգային զօրքերը:

Բաօ-Թինկի ֆրանքօ-գերմանական առժամեայ կառավարութիւնը շնչուեր և գործերը յանձնուեր են չինական տեղական վարչութեանց:

Չին կառավարութիւնը թէեւ 450 միլիոն թաէլի տուգանքը ընդունած է, բայց շատեր կը տարակուսին թէ Չինաստան կարողանայ գոհացուցիչ կերպով երաշխաւորել վճարումը: Օտար պաշտօնեաներու ձեռքով չինական տուրքերը գանձել անկարելի է, որովհետեւ 2000 պաշտօնեայի պէտք պիտի ըլլայ և թոշակները խիստ բարձր պէտք է ըլլան: Նախարարները մեծ մասով կը յայտարարեն որ ծովային մաքսին սակը հարիւրին տասը նշանակուի:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Լօրտ Քիչնէր հետեւեալ հեռագիրը սուած է, ուր կը պարզուի վալքօնթէնի մէջ Անգ-

պիտի տառապինք, դեռ շատ պիտի սպասենք, պիտի փոտինք ու պիտի մեռնինք այս Թուամանիոյ դաշտերուն մէջ, բայց բան մը չէ: Ազգ մը առանց զոհի ազգ չէ: Պուլկարիա ամբողջ գերի ժողովուրդ մը ունի թող մի քանի մարտիրոսներ ալ այսօր ունենայ, եւ հայրուկ կը նշանակէ — տառապիլ, սոված մնալ, կոռուիլ, մէկ խօսքով մարտիրոս մը ըլլալ: Եթէ մենք ենք այդ մարտիրոսները, աւելի լաւ: Որչափ որ շատ ըլլայ, անչափ աւելի լաւ է Պուլկարիայի, Բայց վերջացնեմ, ինձի միշտ այնպէս կը թուի, թէ գործերը պիտի փոխուին, չուտով քաղաքականութիւնը պիտի խոզովուի և մեր ձեռքերը պարագ չը պիտի մնան, մեր սիրտերը պիտի թնգան և մենք պիտի գոչենք՝ «ազատութիւն կամ մահ»: Պիտի մեռնինք փառքով և կոռուի մէջ, Դեռ պիտի կոռուինք, սիրելի եղբայրներ, պիտի կոռուինք Պուլկարիոյ ազատութեանը համար, կեցցէ՛ Պուլկարիա՛...:

Թարգմ. Պ. ՍիրէՄ ձԵԱՆ
(Շարունակելի)

լիացեոց կրած սոսկալի պարտութիւնը :

Անգլիացիք 1,450 մարդով և եօթը թնդանթնորով գացած ատին, պօէրները վերջապահներուն վրայ յարձակեր են և երկու թնդանթն խլէր : Անգլիական գլխաւոր զօրախումբը վրայ հասեր է և թնդանթնները առեր ու պօէրները ետ մղեր է :

Անգլիացիք 57 սպաննուած ունին, որոնց 6ը սպայ են, 121 վիրաւորուած, որոնց 6ը սպայ են և 8 կորսուած՝ որոնց մին սպայ է : Պօէրները 41 դիակ ձգած են կռուին վայրը :

— Բրէթօրիայէն կը հեռագրեն թէ ձէյմսթօուն քաղաքը անձնատուր եղած է Գրիւիճինկէր պօէր զօրավարին, յունիս 2ի առաւօտուն, չորս ժամուան կռիւէ մը ետքը : Խանութները կողոպտուեցին, բայց անգլիական պահպան զօրքերը ազատ արձակուեցին :

— Պօէրները Գրիւիճինկէրի, Միպուրկի, Յուչէի և ուրիշ զօրավարներու առաջնորդութեամբ շարունակ իրենց դիրքերը կը փոխեն : Իրենց միացեալ զօրութիւնը 700 մարդու կը հասնի :

— Վար Օֆիսի տեղեկագիրը կը ցուցնէ թէ մայիս ամսուն մէջ 25 սպայ և 709 զինուոր սպաննուեցին : Կռուին սկիզբէն ի վեր մահերուն թիւը 16,000ի կը հասնի, այսինքն գերի բռնուած պօէրներուն թիւին չափ :

Այս կռիւը կը շարունակէ ծանրապէս ընկճել Անգլիան : Նոր տեղեկութիւններ չի կան վերջին մեծ կորուստէն ի վեր : Ուայթ զօրավարը հալածեր է խումբ մը պօէրներ՝ որոնք ձէյմսթօուն քաղաքը առած ու կողոպտած էին :

Լօրէնձօ-Մարքէզէն ալ կը հեռագրեն թէ Տէլարի և Պէյլըր պօէր զօրավարներուն խումբերը 5000 մարդով Եօհանէսպուրէն նախալ գացող երկաթուղիի գծին կը սպառնան :

— Պէյլըր զօրավարին խումբերէն մէկ մասը 400 հոգիէ բաղկացած յանկարծակի յարձակում կրեր է 240 անգլիացիներէ, երբ մեկնելու համար սայլերը լծելով զբաղած էր : 37 դիակ ձգեր են և ժազմաթիւ գերիներ բռնուեցին, 18 սայլ և 800 եղջիւրաւոր անասուններ գրաւեցին : Փախուստի պահուն պօէրները նոյնիսկ ձգեր են իրենց շրջուն հիւանդանոցները : Հիմայ մնացեր են առանց ռազմամթերքի և առանձ փոխադրութեան միջոցներու : Անգլիացիք 1 մեռեալ և 15 վիրաւոր ունեցեր են :

Գ Ե Բ Մ Ա Ն Ի Ա

Բրուսիոյ պատերազմական նախարարը գատի ենթարկեր է

այն ընկերվարական թերթերը որոնք Ձինաստանի գերման զօրքերուն կատարած վայրագութիւնները երեւան հանած էին : Ամբաստանեալ թերթերը առարկած ըլլալով որ Ձինաստանի գերման զօրքերը գերմանական զանազան պետութիւններէ կազմուած են, Պալէրիոյ, Սաքսոնիոյ և Վիւրթեմպերկի իշխանութիւններն ալ նոյնօրինակ դատեր սկսեցին :

— Պալէրիոյ էրլանկէն քաղաքը իր մէկ հրեայ քաղաքացիէն 30,000 մարքի ժառանգութիւն մը տացեր է արձան մը կանգնելու համար ի յիշատակ գերման երեւելի բանաստեղծ Հանրի Հայնէի :

Թաղապետութիւնը չէ ընդունած այս կտակը առարկելով որ Հայնէ հակագերմանական ձգտողներու շարքին է : Կտակարարին կամքով այդ գումարը Պուտալէշտի պիտի տրուի, որ ինքզինքը պատրաստ ցցուցած է բոլոր պայմանները լրացնելու :

— Ներքին և կրօնական գործոց նախարարները շրջաբերականով մը յայտնած են ոստիկանական իշխանութեանց թէ Ստուտարտաշուկի նիւթերէն գրուած թատերգութեանց ներկայացումը արգիւրուած է :

Բրէնս Հէրպէրթ Պիլզմարք մամուլի միջոցաւ սաստիկ պայքար մը սկսած է կայսրութեան դիւանադպրին, Պ. Պիլզօլի գէմնովէլ տը Համպուրկի մէջ բրէնս Հէրպէրթ կը քննադատէ Պիլզօլի արտաքին քաղաքականութիւնը զայն որակելով իր բու անգլիասիրութեան տիրապետումը : Իրեն համար աւելի ցանկալի պիտի ըլլար Ռուսիոյ հանդէպ հաճոյակատար երեւիլ, քանի որ իբրեւ իր արմատական բողոքող գահաձիւններուն կատարեալ վստահութիւններ շնչելը եղած է :

«Կաղէթ տը Վօս» Հէրպէրթ իշխանին հեգնօրէն պատասխանելով կը յիշեցնէ թէ՛ 1887—88ին Ռուսիա ինչ տեսակ վստահութիւն մը ունէր իր հօրը քաղաքականութեան վրայ և ինչ տեսակ վստահութիւն ունեցաւ Վիէննայի գահաձիւնը, երբ Գերմանիոյ և Ռուսիոյ միջեւ գաղտնի դաշնագրութեան մը գոյութիւնը լսեց :

Ա Ն Գ Լ Ի Ա

Պրոտերազմական նախարարութեան մէջ քննութիւն մը կատարելու համար հաստատուած յանձնաժողովը այդ կազմակերպութեան գլխաւոր թերութիւնը կը կը գտնէ ներկայ այն գրութեան մէջ որով պետերը որոշ պատասխանատուութիւններ չունին ոչ հրամանատարութեան ոչ վարչութեան մէջ :

Յանձնաժողովը իրր դարման կառաջարկէ ապակի գրոնացումը : Պէտք է որոշել ամէն մէկուն պարտականութիւնները և պատասխանատուութիւնը : Գուտաներու զօրապետները լայն հեղինակութիւն և պատասխանատուութիւն ունենալու են : Պէտք է պատերազմ. նախարարութեան մէջ մնայուն յանձնաժողով մը կազմել, նախարարին նախագահութեամբ և քաղաքային ու զինուորական հաստատութեանց պետերէն կազմուած :

Յանձնաժողովը իրր դարման կառաջարկէ ապակի գրոնացումը : Պէտք է որոշել ամէն մէկուն պարտականութիւնները և պատասխանատուութիւնը : Գուտաներու զօրապետները լայն հեղինակութիւն և պատասխանատուութիւն ունենալու են : Պէտք է պատերազմ. նախարարութեան մէջ մնայուն յանձնաժողով մը կազմել, նախարարին նախագահութեամբ և քաղաքային ու զինուորական հաստատութեանց պետերէն կազմուած :

Ս Ե Բ Պ Ի Ա

Սերպիական սահմանազլխին վրայ Ալպանացիներու վերջերս կատարած նորանոր աւարտութիւնները առիթ տուած են Սերպիոյ նախարարապետ Պ. Վուրչի յանձնարարել իր Պօլոյոյ դեսպանին որպէս զի Բ. Դուան կրկին բողոքէ և յայտնէ որ, եթէ պէտք եղած գոհացումը չստացուի, Սերպիա բռնի միջոցներու պիտի դիմէ :

Յունիս 1ին ալպանացիք սերպ սահմանապահ զինուոր մը սպաննուեցին Գրքինա-Չուքաի ժոռ. 3ին Թրէպիլէի գիւղէն տրջաւներ գողնալէն ետքը, սերպ զինուոր մը սպաննուեցին և փախչելու ատեն, և այսպէս կը շարունակուին գրեթէ ամեն օր, ամիսներէ ի վեր :

Պօլոյոյ ռուսական դեսպանը մեծապէս ուժ տուած է սերպ կառավարութեան պահանջներուն, բայց միւս տերութեանց դեսպաններն ալ նոյն կերպով վարուած չեն, ասոնցմէ մին մասնաւորապէս նպաստած է Հին Սերպիոյ սահմանազլխին գէպքերուն ու յուզումներուն :

— Ռուսական գեր ծովակալ Պիրիլէֆ, Միջերկրականի նաւատորմի Նրամանաւարը, քանի մը օր Սօֆիա Ֆէրտինանտ իշխանին հետ անցնելէ ետքը, Պելկրաս անցեր է, ուր թագաւորին ու ժողովրդին կողմէ ջերմագիրն ընդունելութեամբ ողջունուեց : Այս այցելութիւնը կայացուցանէ որ Նիքօլա ձարին և Սերպիոյ թաղաւորին միջեւ օւէթթիւրի մացութիւն գոյութիւն չէ ունեցած թագուհւոյն յուսութեան առթիւ :

Ս Պ Ա Ն Ի Ա

Հակակղերական ձգտումներով գրուած «Էլէքտրաս» թատերախաղը Պարչիլոնայի էլտօրասօ, թատրոնին մէջ ներկայացուելով անագին յաջողութիւն ունեցեր է : Հասարակութիւնը ընդմիջած է խաղը ազազակելով «կեցցէ»

ազատութիւն, մահ յետադիմութեան և ճիշտութեանը :

Թատրոնին աւարտումէն ետ հանրապետական ցոյց մը կազմակերպուեց : Գոյցարարներ 3000 հոգիի չափ երեսփոխան մը առաջնորդութեամբ քաղաք գլխ. փողոցները շրջեր և Մարտիէյէզ երգելով և պոռակ «կեցցէ» հասարակապետութիւն կղերականութիւն և յուսութեանը :

Կղերները հաւատացեալներուն արգիլեր են «Էլէքտրաս» ներկայացման երթալ :

— Պարչիլոնայէն «Էլէքտրաս» կը հեռագրեն թէ իշխանութիւն յաջողութեամբ թագաւորին ու թագուհւոյն գէմ անիշխանակառավարութիւն մը իրեւան հանել : Ոստիկանութեան շոգենալին մէջ Մարտիլիայէն եկող կազմելի մը ձերբակալուեց : Միւս անուն, որ հարցաքննութեամբ մէջ յայտնուեց է թէ քանի մը անիշխանականներ կը ճանչնայ բայց ինք անոնցմէ չէ : Բաւ մը անձեր ալ Մատրիտի մէջ ձերբակալուեցին :

Գ Ա Լ Ո Ւ Ս Մ Ա Ր Տ Ի Ռ Ս Ե Ա

Կ Օ Շ Կ Ա Ա Կ Ա Ր
(Ողիցա «Չար Պօրիս») —

Կը պատրաստէ ամեն ձեւով ընտիր ճաշակով կօշիկներ, յաննարարութիւնները փութով ճշտութեամբ կը կատարուին : Կը խնդրուի յարգոյ յաճախողներէն որ անգամ մը բարեհաճին փորձել մեր կօշիկները համոզուելու համար անոնց գի մացկութեան ու ճաշակաւորութեան :

Գիները խիստ գիւրամատչելի

ԽՄԱԿԳՐՈՒԹԻՒՆ. ԳՆԱՐԺՈՒՄԱՅ

Կը տպագրուին ամէն լեզու այցեատման, հասցեատման, նամակագրութեան, հարաւանկան հրաւիրագիր, մահազգ :

Գիները յոյժ գիւրամատչելի Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին :

ՅԱՆՉՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍ

Отговорникъ:

Д-ръ МХГЖРДИЧЪ ВАРТАНЪ

Печ. Взаимность. — Варна.